

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Նորին Սրբաւթիւն Պօղոս Զ. Պապի վախճանման առթիւ փոխանակուած հեռագիրներ

Յրուսաղեմ, 7 Օգոսոս 1978

Վասիկանի Քարտուղարութիւն
Վասիկան

Մեծ վիճով իմացանք Նորին Սրբութիւն Պօղոս Զ. Պապի մահուան լուրը: Հանգուցեալը Եկեղեցւոյ մեծ առաջնորդ մը եղաւ, ջատագով՝ քրիստոնէական միութեան եւ աշխարհի խաղաղութեան: Ընդունեցեք մեր զգածուած ցաւակցութիւնները: Կաղօրքներ իր ազնիւ հոգիին յախեանական խաղաղութեան համար:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայոց Յրուսաղեմի

Վասիկան, 16 Օգոսոս 1978

Ն. Ամեն. Տ. Եղիեկ Արեւոյ. Տրեքեան
Պատրիարք Հայոց
Յրուսաղեմ, Իսթաթլ

Մեծապէս շնորհակալ ենք Ն. Սրբութիւն Պօղոս Զ. Պապի մահուան առթիւ Ձեր յղած ցաւակցական հեռագրին համար: Նորին Սրբութեան առաջնական զործին կորիզը կը կազմէր համերաշխութիւնն ու համագործակցութիւնը Քրիստոնէաներու միջեւ:

Աղօթարար
ԿԱՐՏԻՆԱՆԱԼ ՎԻՅՕ ՔԱՄԷՐԼԷՆԿՕ

Ն. Ս. Յովհաննէս-Պօղոս Ա. Պապի ընտրութեան առթիւ փոխանակուած հեռագիրներ

Յրուսաղեմ, 27 Օգոսոս 1978

Ն. Սրբութիւն
Յովհաննէս-Պօղոս Ա.
Վասիկան

Ձեր Կարօլիկ Եկեղեցւոյ Հոգեւոր Պետի բարձր պատշոնին ընտրութեան ուրախ աւերած, կը ներկայացնենք Ձեզ մեր արագին շնորհաւորութիւններ եւ կը մտադրենք Ձեր Սրբութեան առողջութիւն եւ Ձեր բարի ծրագիրներուն՝ յաջողութիւն:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայոց Յրուսաղեմի

Վասիկան, 30 Օգոսոս 1978

Ն. Ամեն. Տ. Եղիեկ Արեւոյ. Տրեքեան
Պատրիարք Հայոց
Յրուսաղեմ, Իսթաթլ

Ձերդ Ամենապատուութեան շնորհաւորութիւններէն եւ բարեմաղորութիւններէն խորապէս զգացուած՝ Նորին Սրբութիւնը կը յայտնէ Ձեզ իր ջերմ շնորհակալութիւնները:

ԿԱՐՏԻՆԱՆԱԼ ՎԻՅՕ ՔԱՄԷՐԼԷՆԿՕ

Ն. Սրբութեան կանխահաս մահուան առթիւ փոխանակուած հեռագիրներ

Երուսաղեմ, 29 Սեպտեմբեր 1978

Պետական Քարտուղարութիւն
Վասիկան

Խոր ցաւով իմացանք լուրը՝ անակնկալ եւ անժամանակ մահուան Նորին Սրբութիւն Յովհաննէս-Պօղոս Ա. Պապին: Այս առթիւ կը ներկայացնենք մեր խորին ցաւակցութիւնները Ձերդ Բարձր Սրբազնութեան եւ Կաթողիկ մեծ Սկեղեցիին: Թող Բարձրեալն Ասուած յաւիտեանական հանգիստ պարգեւէ անոր ազնիւ հոգիին:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵՆ
Պատրիարք Հայոց Երուսաղեմի

Վասիկան, 2 Հոկտեմբեր 1978

Ն. Ամեն. Տ. Եղիեկ Արեւապ. Տերտրեան
Պատրիարք Հայոց
Երուսաղեմ, Իսրայէլ

Ընդունեցեք մեր խորին շնորհակալութեան զգացումները Ձեր աղօթքներուն եւ քրիստոնէական սիրոյ արտայայտութիւնը եղող Ձեր հեռագրին համար, մեր Սկեղեցւոյ այս նոր սուգին առիթով:

ԿԱՐՏԻՆԱՂ ՎԻՅՈ ՔԱՄԷՐԼԷՆԿՈ

Անցնող Հոկտեմբերի սկիզբը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ մեծաշուք հանդիսաւորութեամբ նշուեցաւ Ամենայն Հայոց Հայրապետի Գահակալութեան 23րդ տարեդարձին հետ՝ Ն. Ս. Օծութեան ծննդեան 70ամեակը: (Նորին Սրբութիւնը ծնած է 20 Սեպտ. 1908ին): Այդ առթիւ, ի բացակայութեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Լուսարարապետ Սրբազանը հետեւեալ հեռագիրը յղեց Նորին Սուրբ Օծութեան. —

Երուսաղեմ, 20 Սեպտեմբեր 1978

Նորին Սուրբ Օծութիւն
Տ. Տ. Վազգէն Ա.
Վեհ. Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին

Ձերդ Սրբութեան ծննդեան 70ամեակի եւ գահակալութեան 23րդ տարեդարձի բաւերաստիկ առիթներով հանեցեք ընդունիլ մեր, Միաբանութեան եւ համայնքին յարգալից շնորհաւորութիւններն ու սրտագին բարեմաղորութիւնները: Կ'աղօթենք ի սրտ ուր Ամենակալն Ասուած շնորհէ Ձերդ Սրբութեան երկար եւ երջանիկ կեանք, բարգաւաճում Մայր Հայրենիքին եւ պայծառութիւն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ
եւ Միաբանութիւն Սրբոց Յակօբեանց

Ի պատասխան, հետեւեալ հեռագիրը ստացուած է Նորին Ս. Օծութեանէն

Ս. Էջմիածին, 2 Հոկտեմբեր 1978

Գերշ. Տ. Հայրիկ Արեւոյիսկոպոս
Պատրիարքարան Հայոց
Երուսաղեմ, Իսրայէլ

Շնորհակալութեամբ ստացել ենք Ձեր շնորհատրական հեռագիրը մեր ծննդեան տարեդարձի առթիւ: Հայրապետական օրհնութիւն Ձեզի, Միաբանութեանդ բոլոր անդամներուն եւ համայն մեր հաւասացեալ ժողովուրդին:

ՎԱԶԳԷՆ Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Սեպտ. 5ին, Վատիկանի մէջ, Ն. Ս. Պապի Գահակալութեան Հանդիսութեանց իբր Մասկուալի Ռուս Պատրիարքութեան ներկայացուցիչ մասնակցելէ ետք, անակընկալօրէն վախճանեցաւ Ռուս բարձրաստիճան հոգեւորականներէն Մետրոպոլիտ Նիքոսիմ: Հանդուցեալը 1967-1970 եղած է Ս. Քաղաքի Ռուս Միաբանութեան Մեծաւորը և ապա «աջ բազուկը» Ռուսաց Պատրիարքին: Այս առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետեւալ հետագիրը յղեց Մասկուա, Ն. Ամեն. Պիմէն Պատրիարքին:

Յուսադեմ, 7 Սեպտեմբեր 1978

Ն. Սրբուրբին Պիմեն
Պատրիարք Հայոցն Ռուսաստանի
Մոսկուա

Ընդունեցե՛ք մեր խոր ցուակցութիւնները Մետրոպոլիտ Նիքոսիմի անժամանակ մահուան առթիւ: Աստիճար ունեցած եմ հանչեալու հանգուցեալը իբրեւ կորովի եւ նուիրեալ պատեօնեայ Ասուծոյ, Յուսադեմի իր պատեօնավորութեան օրջանեմ մինչեւ Լեւինկրասի մէջ վարած իր բարձր պատեօնը: Կ'աղօթեմ իր հոգւոյն հանգստեան եւ Ռուս մեծ եկեղեցւոյ բարգաւաճումին համար:

եղբայրական սիրով
ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐԻՔ ՏԷՐՏԷՐԵԱՆ

Ի պատասխան ստացուած է հետեւալը. —

Մոսկուա, 9 Սեպտեմբեր 1978

Ն. Ամեն. Յուսադեմի Հայոց Պատրիարքին
Յուսադեմ, Իսրայիլ

Ընդունեցե՛ք մեր շնորհակալութիւնը՝ Ս. Սինոսի աւագ անդամ, Լեւինկրասի եւ Նովկորոսի Մետրոպոլիտ Նիքոսիմի անժամանակ մահուան առթիւ Ձեր յայտնած անկեղծ ցուակցութեանց համար:

ՊԱՏՐԻԱՐԻՔ ՊԻՄԷՆ

Յուսադեմ, 5 Դեկտեմբեր 1978

Մեծ. Տիար Ալեքս Մանուկեան
Պատուակալ Նախագահ Հ. Բ. Ը. Միութեան
Նիւ Եարք

Ձեզ Վանուսեան Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Նախագահութեան բարձր պատեօնին կոչուելու 25ամեակի ուրախ առիթով, կը ներկայացնեմ Ձեզ՝ մեր եւ մեր Միաբանութեան արտաքին շնորհաւորութիւնները եւ կ'աղօթեմ Ամենակարող Ասուծոյ որ շնորհէ Ձեզ երկար եւ առողջ կեանք, օրակազի հանոյն ու պատիւը ունենալ օղջունելու Հայ ժողովուրդի մեծ զուակին, մեծագոյն եւ անզուգական բարեբախին եւ Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան ցկեանս Նախագահին Նախագահութեան 50ամեակը:

ԵՂԻՇԷ ԱՐԳԵՊՈՎ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայոց Յուսադեմի

Ե Կ Ե Ղ Ե Տ Ո Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Եր. 1 Ապրիլ. — Ս. Յովհաննու երուսաղիմայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Բարսեղ Արդ. Գալեմսէրեան:

● Կիր. 2 Ապրիլ. — Տճեսիսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Ատուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Բուրէն Վրդ. Յովհաննեան:

● Գշ. 4 Ապրիլ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ նախագահեց վանուց տեսուչը՝ Հոգչ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան:

● Եշ. 6 Ապրիլ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

● Ուր. 7 Ապրիլ. — Վազուան «Օ մանկանց տունին առիթով, կէսօրէ ետք Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ պաշտուեցաւ Եփրատի գահկան ժամերգութիւն, իսկ գիշերասկզբին՝ Հսկման արարողութիւն, որուն ընթացքին քարոզեց վանուց տեսուչը՝ Հոգչ. Տ. Սեան Վրդ., Քրիստոնեայի կեանքին մէջ հաւատքին ունեցած կենսական դերի մասին: Ժողովուրդը իր բարեպաշտական զգացումները յայտնած էր 40 մանկանց նկարին առջև շինուած շարժական սեղանին զիմաց մտմտաբանութեամբ և ձէթի նուիրատուութեամբ:

● Եր. 8 Ապրիլ. — Ս. Քառասուն մանկանց Սերասիոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Վերաբերումը կատարուեցաւ 40 մանկանց նկարին առջև շինուած շարժական սեղանին վրայն, որուն զիմաց, կաթնասոյս մը մէջ, զը պլպլային 40 գոյնզգոյն կանթեղներ, աւանդական ստացապատ լինը խորհրդանշող:

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատարագը Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառուով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Ս. Գերեզմանի և Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, վերջինիս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատունակ: Ապա կատարուեցաւ Տեօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգչ. Տ. Մանուէլ Արեղայ Երկաթեան:

● Կիր. 9 Ապրիլ. — Գաւառից: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Լուսաւորիչ: Ապա, Գերշ. Տ. Եանէ Արքեպս. Աճեմեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատուց քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և քարոզեց, մեկնարանելով Գատարի աւետարանական առակը: Ս. Պատարագի ա-

ւարտին կատարուեցաւ եռադարձ մեծանանդէս թափօր Ս. Գերեզմանին և մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, զլխաւորութեամբ Ամեն. Ս. Պատարագը Հօր:

● Գշ. 11 Ապրիլ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ քարոզեց վանուց տեսուչը՝ Հոգչ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան, մեկնարանելով Անպտուղ Թղենիի աւետարանական առակը:

● Եշ. 13 Ապրիլ. — Ի Ս. Յակոբ կատարուած Մեծ Պահոց վերջին Հսկումին նախագահեց Գերշ. Տ. Եանէ Արքեպիսկոպոս:

● Ուր. 14 Ապրիլ. — Ս. Լուսաւորիչ վերապամուտի նախատունակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

● Եր. 15 Ապրիլ. — Ս. Հօրն մերայ Գրիգորի Լուսաւորից (Մոսի ի վիրաց): Առաւօտեան ժամերգութեան աւարտին, ըստ սովորութեան, Ս. Լուսաւորիչ մատուցը իր հանգստարանէն թափօրով փոխադրուեցաւ Աւագ Սեղան, ձեռամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոսի: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ աւանդատուն Ս. Լուսաւորիչ սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Հայկազուն Արդ. Մելիգունեան:

— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. զլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին վրայ կատուցուած մեր վրանամատուան մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատունակ:

— Իրիկուանդէմին, նոյն վայրին մէջ պաշտուեցան եկեղեցէի և Հսկման կարգեր և ապա՝ գիշերային ու առաւօտեան ժամերգութիւններ: Հանդիսապետն էր Հոգչ. Տ. Յովսէփ Վրդ.: Ամենէն ետք, Ս. Պատարագ մատուցուեցաւ Համբարձման մատուան մէջ: Ըստ սովորութեան, պատարագիչն էր սրբավայրի տեսուչը՝ Հոգչ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան: Արարողութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 11ին:

● Կիր. 16 Ապրիլ. — Գալուսեան: Առաւօտեան ժամը 8ին, Գերշ. Տ. Եանէ Արքեպս. զլխաւորութեամբ, Միաբան Հայրեր դարձեալ ինքնաշարժերով բարձրացան Զիթենեաց լեռ, ու «Հրաշափառուով մուտք գործեցին Համբարձման սրբավայրը, ուր մեր վրանամատուան մէջ պատարագեց Հոգչ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր: Եպիսկոպոսական զգեստաւորմամբ: Գերշ. Տ. Եանէ Սրբազան քարոզեց օրուան խորհուրդին շուրջ, յայտնելով թէ այս օտուր միակն է եկեղեցեւոյ տուններէն՝ որ անցեալ դէպքի մը ոգեկոչումը չէ, այլ սպառայային իրականանալիք իրողութեան մը ազդարարութիւնը:

● Գշ. 18 Ապրիլ. — Երեկոյեան, Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց վերջին Հսկումը, որուն ընթացքին քարոզեց Հոգչ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան, զգուշացնելով ներկաները բամբասանքի մուլութենէն:

● Գշ. 19 Ապրիլ. — Ս. Կոյսի Աւետման հանդիսուար նախատեսակը պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Լանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս:

● Եշ. 20 Ապրիլ. — Աւետմն Ս. Ասուածածի: Առաւօտուն, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթեմանի ձորը ու շրջափառով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, որ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գերշ. Լանդիսապետ Սրբազանը:

● Աւր. 21 Ապրիլ. — Խ. օր մեծ պահոց: Առաւօտուն՝ Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Արևազալի վերջին ժամերգութիւնը, իսկ կէսօրէ կտք՝ Ենդազականի վերջին ժամերգութիւնը:

● Եր. 22 Ապրիլ. — Յիսուայ յարութեան Ղազար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գրիսազրի մատրան մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան:

— Կէսօրէ կտք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շրջափառով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, որ պաշտուեցան երկուշեան ժամերգութիւնն ու Ենդազականի մեծահանդէս նախատեսակը՝ մեր վերնատան մատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսուար թափօր Տաճարէն ներս: Թափօրագետն էր Հոգշ. Տ. Մանուէլ Արեղայ:

● Կիր. 23 Ապրիլ. — Ենդակապտի: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, վերնատան մեր մատրան մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Յովէփ Վրդ. Մամուր: Ապա, գլխաւորութեամբ Գերշ. Տ. Շանէ Արքեպիսկոպոսի, կազմուեցաւ մեծահանդէս թափօր, որ երկիցս գարձաւ Բրիտանի Ս. Գերեզմանին շուրջ: Թափօրականք ի ձեռն ունէին ձիթնի ի արմաւենիի ստեր, իսկ մեր թափօրին կը նստակէին Ղպտոց և Ասորաց թափօրները: Ս. Գերեզմանի շրջափակին մէջ կատարուեցաւ Անդաստան, որմէ կտք թափօրը ելաւ դուրս, բնուել շրջանը Պատանաւեղիին: Ժամը 1ր կը մօտենար երբ Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք և Որդիսորհորք քս դալստեանն շարականը երգելով Հայոց Թաղի մուտքէն՝ յառաջացաւ և բարձրացաւ Պատրիարքարան:

— Կէսօրէ կտք, շրջափակը զարգարուած Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ նախ Անդաստան, ապա հոգեպարտ մեղեդիներով ընդմիջուած երկուշեան ժամերգութիւն և, հուսկ ուրեմն, Ենդազականի խորհրդաւոր արարողութիւն: Արարողութեանց կը նախագահէր Գերշ. Տ. Շանէ Արքեպս.: Հոգշ. Տ. Սևան Վրդ. Աւագ Սեպեանի բեմէն կարգաց հոգեօր սիրով և փափաքով՝ վարագոյր բացողներու առնականացանկը և կոշ ըրաւ ներկաներուն որ

իրենց սրտաբուխ լուծաներով սատարեն Ազունիէի Ազգային Բուժարանին ի Լիբանան: Այդ նպատակաւ կեկեղեցոյ զոյգ մուտքերուն զետեղուած էին պնակներ:

● Գշ. 25 Ապրիլ. — Աւագ երեքօրի (Յիսուայի սան կուսանոց): Աննպատ օգի պատճառաւ, այս տարի կարելի չեղաւ Ս. Պատարագ մատուցանել Ս. Յարութեան Տաճարի գաւթին արեւելակողմը բացուող Ս. Յովհ. Աւետարանչի մատրան մէջ, այլ Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան: Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանի երկուսն աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն: Ախտաւորներու շոգայութեան պատճառաւ, զանց առնուեցաւ նաև Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան այս օրուան յատուկ բացատրիկ թափօրը Ս. Յարութեան Տաճարէն ներս:

● Եշ. 27 Ապրիլ. — Աւագ Հիմեղօքի (Յիսուայի Ընթրեց): Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Վարդ Աղայխարողաց:

— Կարճ զազարէ մը կտք, Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ հանդիսուար Ս. Պատարագ: Պատարագին էր Գերշ. Տ. Շանէ Արքեպիսկոպոս, որ կատարեց նաև ընթերցումը Ս. Յովհ. Ոսկերեքանի Հաղորդութեան ձառնի: Բաւական թիւով ժողովուրդ ստացաւ Ս. Հաղորդութիւն:

— Կէսօրէ կտք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Ոտնալուայի հոգեգրաւ արարողութիւնը: Եկեղեցոյ զոյգ դասերը լեցուն էին օտար հիւրերով, որոնց շարքին էին Երուսաղէմի Բարդապպետ Ն. Վսեմ. Թէտի Բօլէք, Նահանգային Կառավարչի փոխանորդ Տիար Տափա Իէն, ինչպէս նաև Անկիլիքան Գերշ. Արքեպիսկոպոսը որ, որի շտաբիններու նման, արարողութեան աւարտին զգեստաւորուելով բարձրացաւ Աւագ Խորան, և կատարեց, Անգլերէն լեզուով, ընթերցումը Ս. Աւետարանէն Ոտնալուայի վերաբերեալ համարներուն:

— Ժամը 4:30ին, փոքր թափօր մը, գլխաւորութեամբ Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեանի, մեկնեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Չարչարանաց խորանին առջև կատարուած Ս. Աւետարանի ընթերցումէ կտք թափօրը յառաջացաւ զէպի եկեղեցոյ գաւթին մէջ գտնուող Ս. Զիթնիի ձառք, որուն զիմաց կատարուած արարողութեանէն կտք Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս խօսք առնելով՝ պարզեց հանգամանքները Բրիտանի զատավարութեան, տալով նաև պատմականը նոյն վանքին: Գերշ. Սրբազանը Ս. Պետրոս առաքեալի սուրբութեամբ մատին ալ խօսեցաւ Ս. Փրկչի կիսուներ մատրան մէջ, որ մեկնեցան թափօրականք ապա, շարականներու երգեցողութեամբ: Ըրաւ նաև հակիրճ պատմականը հա-

յապատեան և բրիտանական տեսակետէ մեծ կարեւորութիւն ունեցող այս Սրբալիային, և Ս. Պետրոսի զգլխումէն բարոյական դասեր հանեց ներկայ հասարակչեանը:

— Գիշերակերին, Մայր Տաճարին մէջ պաշտօնեցաւ Վարդ Խաւարման, արքայազնացիկ խորհրդաւորութեամբ: Յուզիչ էր պահը երբ համատարած մութին մէջ խօսք առաւ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս, կուռ քարոզով մը վեր հանելով բացի գիշերուան բարեբար ու փրկարար նշանակութիւնը: (Սոյն քարոզը տեսնել ՍԻՈՒՆԻ նախօրը թիւին մէջ):

● Ուր. 28 Ապրիլ. — Աւագ Ուրաք (Յիւստակ Խաչիլոբեան): Կէտօրը քիչ անց՝ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատրան մէջ կատարուեցաւ Վարդ Խաչիլոբեան, նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի:

— Ժամը 4ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ մեծահանդէս Վարդ Քաղման Քրիստոսի, նախագահութեամբ Ամենապատիւ Ս. Պատրիարք շօր:

● Շր. 29 Ապրիլ. — Աւագ Շարաք (Ճրագլոյց Ս. Զատիկ): Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտօնաւժ ժամերգութիւնէն քիչ ետք, ժամը 8ին, փոքր թափօր մը Ս. Յարութեան Տաճար մեկնեցաւ, կատարելու համար Տաճարի դրան բացման աւանդական ձևակերպութիւնը, բանալին առնուելով Աւագ Քարգման շօրը: Տ. Վահան վրդ. Քօփալեանի ձեռքէն:

— Ժամը 10.15ին, Ամեն. Ս. Պատրիարք շօր գլխաւորութեամբ, ամբողջ Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանին շուրջ մէկ անգամ դառնալէ ետք թափօր սուղուեցաւ Տաճարի մեր Տեսչարանը: Արևելեան եկեղեցիներու համայնքներէն և Կիպրոսէն ու Յունաստանէն ժամանած Յոյն ուխտաւորներու բազմութեամբ լեցուած էին Տաճարին գրեթէ բոլոր մասերը: Ժամը 11ին կատարուեցաւ կնքումը Ս. Գերեզմանի դրան, ի ներկայութեան պետական ղեկավարին: Կէտօրին՝ Յունաց Միաբանութիւնը մուտք գործեց Տաճար, ու կէս ժամ շանցած իրենց մեծահանդէս թափօրը սկսաւ, զլխաւորութեամբ Գերշ. Տ. ձերմանօս Արքեպս. ին, որ եռազարձ թափօրի աւարտին, մեր Լուսահանին՝ շօրը: Տ. Սեան վրդ. Դարիպեանի հետ մտաւ Ս. Գերեզման, ուրկէ հինգ վայրկեան ետք դուրս պիտի գար նախական լոյսը, կարելի փութով փոխանցուելով Ս. Գերեզմանի շրջափակին վրայ հայող մեր վերնամատրան պատշգամբին մէջ իր տեղը գրաւած Ամեն. Ս. Պատրիարք շօր, որ անով կ'օրհնէ վարը խննուած ծովածաւալ բազմութիւնը: Անմիջապէս ընթացք կ'առնէ մեր թափօրը, որ Տաճարին հայկական և յունական բոլոր զանգեւորն և կոչեակներուն զուարթ զօղանջներուն ընդմէջէն երիցս շրջանը կ'ընէ Ս. Գերեզմանին, երգելով Յարութեան շարականները: Թափօրը կը գլխաւորէր,

ըէր, ըստ սովորութեան, Լուսահան շարաւորը, եպիսկոպոսական խօսք ի գլուխ, իսկ Ղպտիններ և Ասորիներ թափօր կազմած կը հետեւէին մեր թափօրին: Ժամը 2.30ին, Միաբանութիւնը համար կ'լաւ ղեկով Մայրալիանը: ձամբու կէտին, Գաւթի բերդին զիմաց, Պատրիարքն ու Լուսահանը զգեստաւորուեցան և առաջնորդութեամբ շ. Մ. Բ. Մ. ի և շ. Ե. Մ. ի սկսուաներուն և արհեստներուն թափօրը յառաջացաւ, Վրիտանոս յարեաւ և Ալյոսր յարեաւ շարականները երգելով: Ամեն. Ս. Պատրիարք շօր կողմէ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուած Ս. Աւետարանի ընթերցումը ժամուան մը համար փակեց փառայեղ այս հանդիսութիւնը:

— Ժամը 4ին, Մայր Տաճարին մէջ սկսաւ ճրագալոյցի արարողութիւնը, որուն աւարտին, Քրիստոսի յարութեան աւետիսով բացուեցաւ վարագոյրը Աւագ Սեղանին և սկսաւ իրիկնաղձի խորհրդաւոր Ս. Պատարագը՝ զոր մատոյց շօրը: Տ. Ասպետ Արդ. Պալեան: Յետոյ կատարուեցաւ Ս. Զատիկի նախատօնակ՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. ին: Արարողութեան աւարտին, Ալյոսր յարեաւ շարականի երգեցողութեամբ Միաբան շարեան և զպիւրներ զգեստաւորեալ բարձրացան Սեղանատուն՝ ընթերթի:

● Կիր. 30 Ապրիլ. — ԶԱՏԻԿ ԵՄԻՈՒԹԵԱՆ ՏԵՆԱՆ ՄԵՐՈՅ: Կէս գիշերէն ետք ժամը 1.30ին, Մայրալիան քիչ մեծ զանգը ստբու ձեռնած արդէն Միաբանութիւն և ժողովուրդ: Կէս ժամ ետք. Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի զըլխաւորութեամբ, Միաբան շարեր կը մեկնին Ս. Յարութեան Տաճար: Ս. Գողգոթայի վրայ կատարուած ուխտէն ետք, Տաճարի վերնատան մեր մատրան մէջ պաշտօնեցաւ գիշերային ժամերգութիւնը և մաս մը առաւօտեան ժամերգութիւնէն մինչև շարաց, երբ Միաբանութիւնը ի՛նչաւ շրջափակը Ս. Գերեզմանին, շարունակելու համար ժամերգութիւնը, երիցս զարձամբ Սրբալիային շուրջ: Ս. Գերեզմանի դրան Եւղարբից Աւետարանի ընթերցման աւարտին կատարուեցաւ Անդաստան ու երգուեցաւ ՎՊաշի քս Քրիստոս: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց և Ասորոց թափօրները: Մէկ ժամուան զազարէ ետք, Գերշ. Զանգիսապետ Սրբազանը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Կենսատու Գերեզմանին վրայ և քարոզեց օրուան մեծ տօնին շուրջ: Ս. Պատարագէն ետք, արարողութիւնը փակուեցաւ Տաճարի մեր Տեսչարանին մէջ: Վանք գարձին՝ շայոց թաղի մուտքէն, Յարութեան շարականներու երգեցողութեամբ Միաբանութիւնը յառաջացաւ և բարձրացաւ Պատրիարքարան:

— Կէտօրէ ետք, Մայրալիան քիչ մեծ րակին մէջ կատարուեցաւ Զատեակեան մեծ Անդաստանը՝ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք շօր:

● Բշ. 1 Մայիս. — Բ. օր Ս. Զատիկի (Յիսուսակ մեռելոց): Ամեն. Ս. Պատրիարք Հայրը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ և ապա, Կենաց Փայտի մատունքն ի ձեռին և ամպնօմանի ներքև, նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած եռագարձ մեծահանգէս թափօրին, որուն ընթացքին վարդապետներ ի ձեռին ունէին սրբոց մատունքներ: Յետոյ երգուեցաւ Արեւադարչի ճծանապարհ շարականը՝ ուխտաւորներուն իրեն ողջերթի, որմէ ետք, Այսօր յարեաւ շարականը երգելով ամէնքը բարձրացան Պատրիարքարան, ուր ն. Ամենապատուութիւնը Ս. Պատարագի նշխար բաժնեց բոլորին:

● Գշ. 2 Մայիս. — Գ. օր Ս. Զատիկի: Մայր Տաճարի Ս. Գլխադիր մատարան մէջ քահանայական Ս. Պատարագ մատոյց Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան, որ հիւրարար Ս. Աթոռ կը գտնուէր շարաթէ մը ի վեր, խումբ մը Յրանասահայ ուխտաւորներու հետ: Անոնցմէ շատեր, Ս. Պատարագէն ետք, իրենց ննջեցեալներու հողիներուն համար ընել տուին հոգեհանգիստ՝ որուն նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

● Եր 6 Մայիս. — Գլխատուն Յովհաննու Կարապետի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան. վերաբերումը կատարուեցաւ Ս. Յովհ. Կարապետի խորանին վրայէն:

● Կիր. 7 Մայիս. — Նոր Կիրակի (Յիսուսակ բիրտուր նահատակաց մեռոց յրճոցս Ա. Համախառնային Պատրագովի): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատոյց, ըստ սովորութեան, Լուսահանրէ Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան: Քարոզեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան, որ Եղեկիէլ մարգարէի տեսիլքով ուղեց բացատրել մեր ազգին վերյաճումը իր դէմ 63 տարիներ առջ գործադրուած անմարդկային սճիբէն ետք: Ապա, Ամեն. Ս. Պատրիարք Հօր զխաւորութեամբ, հանգստեան շարականներու երգեցողութեամբ և Հայ արիւնքու բոլոր խումբերուն առաջնորդութեամբ ու ծաղկեպսակներով, Միաբանութիւն և ժողովուրդ ուղղուեցան Ս. Փրկչի ազգային զերեզմանատունը, ուր Արարչի նահատակաց յուշարձանին շուրջ կատարուած հանգստեան պաշտամունքէն ետք խօսք առաւ Տիար Վարդան Տէր Վարդանեան, խօսելով Ազգիւ 24ի Եղեկեան մտախն: Յետոյ բոլորն ալ զարձան շ. Ե. Միութեան ակումբը՝ հոգեւորականեցու:

● Եր. 13 Մայիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Թուրքն Վրդ. Յովակիմեան:

— Կէսօրէ ետք, վաղտուն Աշխարհամատրան Կիրակիի առթիւ, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Դարիկեանի զխաւորութեամբ, Միաբանութիւնը շարաշափառով մուտք գործեց Ս. Յա-

րութեան Տաճար, ուր վերնատան մեր մատարան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տահարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան:

● Կիր. 14 Մայիս. — Աշխարհամատրան (Կանաչ Կիրակի): Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատարան մէջ: Ապա, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Դարիկեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որուն աւարտին նախագահեց Սրբավայրին առջև կատարուած Անդառտանին: Ասով վաղուեցան Չատկական շրջանի հանդիսութիւնները յիշեալ Տաճարէն ներս:

● Եր. 20 Մայիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկազուն Արղ. Մեղրոնեան:

● Կիր. 21 Մայիս. — Կարմիր Կիրակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աստու Արղ. Պալեան: Ս. Պատարագէն ետք, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Դարիկեան վարդապետական գաւազանի իշխանութիւն շնորհեց Հոգշ. Տ. Հայկազուն Արղ. Մեղրոնեանին: (Տճ՝ էջ 203):

● Եր. 27 Մայիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Դանուէլ Արղ. Երկաթեան:

● Կիր. 28 Մայիս. — Տօն Երեմեան Ս. Խաչի: Առաւօտեան ժամերգութեան աւարտին, ըստ սովորութեան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կարգացուեցաւ Ս. Խաչի լուսաւորեման առիթով Երուսաղէմի Ս. Կիրեղ Հայրապետին Կոստանդ կայսրին յղած Թուղթին թարգմանութիւնը: Ընթերցումը կատարեց և անոր յաջորդող Անդառտանին նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Դարիկեան: Ապա Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան: Աւագ խորանին վրայ կը տեսնուէր վառ կանթեղներով զարդարուն Ս. Խաչի նշանը:

● Եր. 3 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Արղ. Դալէմէրեան: Ընդշոյնէն առաջ, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. կատարեց վերջին օժումը նախորդ օր վախճանած Մերոսով Վրդ. ի: (Այս մասին տեսնել առանձին Սիոնի այս թիւին մէջ):

● Կիր. 4 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն վերջերս վախճանած Ս. Աթոռայ Միաբան երկու Արքեպիսկոպոստներու — Իրաքի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Ասողիկ Արքեպս. Ղազար-

եանի և շար. Ամերիկայի Կաթիլ. Պատուիրակ Գերշ. Տ. Բարգէն Արքեպս. Ապատեանի — հոգիներուն համար: Հանգուցեալ Սրբազաններուն արժանիքները դրուածեց և պաշտամունքին նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկ.:

● Դշ. 7 Յունիս. — Կէսօրէ ետք ժամը 2-30ին, Գերշ. Տ. Կիւրեղ եպս. Գարիկեանի զլիաւորութեամբ, Միարան շայրեր ինքնաշարժերով բարձրացան Ձիթենեաց լեռ, ուր շամբարձման սրբափայլին վրայ կառուցուած մեր վրանամատարան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատուեցաւ:

— Գիշերասպիտակին, հոն կատարուեցան նաև «Եկեղեցէի» և Նիկման կարգեր և ապա՝ գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ: Հանգիստպետն էր Նոզը. Տ. Հայկասեր Վրդ. Պայրահան: Աստուգութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 9-30ին:

● Եշ. 8 Յունիս. — ԼԱՄԲԱՐՁՈՒՄԸ ՏԵՍԱՌԻՆ: Առաւօտեան ժամը 7ին, Լուսարարպետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի զլիաւորութեամբ, Միարանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Ձիթենեաց լեռ ու «Շրաշտփառ»-ով մուտք գործեց շամբարձման սրբատեղին. ուր Գերշ. Տ. Կիւրեղ եպս. մատուց սրբան հանդիսաւոր Ս. Պատարագը մեր վրանամատարան մէջ և քարոզեց շամբարձման խորհուրդին շուրջը: Գերշ. Լուսարարպետ Սրբազանը նախագահեց Մայր Աթոռ Սրբէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեկարձի առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»-ի արարողութեան, իսկ Գերշ. Պատարագի Սրբազանը՝ Ս. Պատարագէն ետք Սրբափայլին առջև կատարուած «Անդաստանին»:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստանին» նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անճեան:

● Եր. 10 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղբիւր ժամարան էր Նոզը. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Կատարուեցան Սարկաւազական ձեռնադրութիւն: (Այս մասին տեսնել առանձին՝ ամսագրին այս թիւին մէջ, էջ 199):

— Բ. Ծաղկազարդի նախատանակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանգիստպետն էր Գերշ. Տ. Կիւրեղ եպս.:

● Կիր. 11 Յունիս. — Երկուրդ Ծաղկազարդ: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարան էր Նոզը. Տ. Մանուէլ Արդ. Երկաթեան:

● Եր. 17 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատարան մէջ: Ժամարան էր Նոզը. Տ. Յովակիմ Վրդ. Մամբար:

— Հոգեգալստեան հանդիսաւոր նախատանակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Շոր:

— Իրիկնազէմին, նոյն Տաճարին մէջ կատարուած «Եկեղեցէի» և Նիկման կարգերուն նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ եպիսկոպոս:

● Կիր. 18 Յունիս. — ԼՈՒԳԵՒԻԼՈՒՍ: Բարեկենդան եղիական պահոց: Սրբան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Գերշ. Տ. Կիւրեղ եպս. Գարիկեան: Ս. Պատարագի ընթացքին կարդացուեցաւ Ս. Յովհաննէս Ոսկերեքան Հայրապետի երեք մասերէ բաղկացած Հոգեգալստեան ներբողը: Առաջին մասին ընթերցումը կատարեց Ամեն. Ս. Պատրիարք Շայրը:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստանի» աւարտին, Գերշ. Տ. Կիւրեղ եպիսկոպոսի զլիաւորութեամբ, Միարան շայրեր, ժառանգաւոր սաներ և հաւատացեալներ մեկնեցան Սրան լեռ, ուր վերջին ընթերցի վերնատան մէջ պաշտուած Հոգեգալստեան ժամերգութեանէն ետք Գերշ. Սրբազանը խօսք առնելով՝ տուաւ համառօտ պատմականը Սրբափայլին: Թափօրը ապա մեկնեցաւ Ս. Փրկչի վանք, որուն գաւթին մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ հոն թաղուած Ս. Աթոռոյ հանգուցեալ Պատրիարքներու հոգիներուն համար:

● Եր. 24 Յունիս. — Է. օր Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրամանքի տանիքին վրայ գտնուող Ս. Հոգւոյ մատարան մէջ: Ժամարան էր Նոզը. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Կիր. 25 Յունիս. — Յիւստակ եղիայի մարտիկ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատարան մէջ: Ժամարան էր Նոզը. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

— Ս. Հռիփսիմեանց նախատանակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանգիստպետն էր Լուսարարպետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

● Բշ. 26 Յունիս. — Ս. կուսանաց Լռիփսիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան Ս. Հռիփսիմէի մատարան մէջ: Ժամարան էր Նոզը. Տ. Նուբան Վրդ. Մանուէլեան:

● Ուր. 30 Յունիս. — Ս. Լուսաւորչի վերապէն էլքի նախատանակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարպետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

● Եր. 1 Յունիս. — Ս. Հօրն մերջ Գրիգորի Լուսաւորչի (Ելն ի վիսպակի): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարան էր Նոզը. Տ. Ապետ Արդ. Պալեան:

— Նախատանակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարպետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս, որմէ ետք, ըստ սովորութեան, ձերարդիւր «Տէր ողորմեա» երգուեցաւ:

● Կիր. 2 Յուլիս. — Տօն Կարուղիկէ եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց շոգշ. Տ. Մանուէլ Արքեպիսկոպոս երկաթեան: Շայր մերտէն առաջ կատարուեցաւ շայր պատարական Մաղթանքս վասն Ս. Էջմիածնի, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս: Ասլանեանի: — Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած Վնդատանին նախագահեց Գերշ. Տ. Նորայր Արքեպիսկոպոս: Պողարեան:

● Շր. 8 Յուլիս. — Ս. Մեծին Ներսիսի եւ Խաղայ եպիսկոպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր շոգշ. Տ. Ոսկի Արղ. Որդիքեան:

● Կիր. 9 Յուլիս. — Բարեկենդան Ս. Լուսաւորչի պանոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատարան մէջ: Ժամարարն էր շոգշ. Տ. Յովսէփ Վրղ. Մամուր:

● Ուր. 14 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

● Շր. 15 Յուլիս. — Ս. Լորն մերոյ Գրիգորի Լուսաւորչին (Գիւս Նոխար): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատարան մէջ, ուր թաղուած է, բոս աւանդութեան, մատուցը Ս. Լուսաւորչի: Պատարագեց շոգշ. Տ. Հայկասեր Վրղ. Պայրամեան:

● Կիր. 16 Յուլիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ: Ժամարարն էր շոգշ. Տ. Սեան Վրղ. Դարիպեան: Ս. Պատարագէն ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս նախագահեց հանգ. Տ. Մերտոյ Վրղ. Տեփոյեանի մահուան քառասունքին առթիւ կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին:

● Դշ. 19 Յուլիս. — Թարգմանչաց հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

● Եշ. 20 Յուլիս. — Ս. Թարգմանչաց վարդապետ մերոյ Սանակայ եւ Մերտոյ (Տօն ազգային): Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ պատարագեց Ս. Ուխտիս երիտասարդ Միարան շոգշ. Տ. Վիգէն Վրղ. Այքաղեան, որ կը հետեւ կրօնական բարձրագոյն դասընթացքի ի Լոնտոն եւ եկած էր ամառնային արձակուրդէն մաս մը մեր մէջ անցընելու:

● Շր. 22 Յուլիս. — Ս. Տղասայ թագաւորին եւ Ասիւն սիկնոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր շոգշ. Տ. Ռուբէն Վրղ. Յովակիմեան:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

● Կիր. 23 Յուլիս. — Գիւս Տիոյ Ս. Ասուածածինի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթեմա մանրի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տի-

բամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր շոգշ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան: Երթ ուղարձի թափօրները գլխաւորեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

● Ուր. 28 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

● Շր. 29 Յուլիս. — Ս. Երկասաց առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի՝ Երեւաններոյ առաքելոցն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերնատարան մէջ: Ժամարարն էր շոգշ. Տ. Բարսեղ Արղ. Գալէմտէրեան:

● Կիր. 30 Յուլիս. — Բարեկենդան Վարդավառի պանոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատարան մէջ: Ժամարարն էր շոգշ. Տ. Ոսկի Արղ. Որդիքեան:

● Ուր. 4 Օգոս. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից Ս. Էջմիածնի մատարան մէջ: Հանգրստայեան էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

● Շր. 5 Օգոս. — Յիւստակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածնի մատարան մէջ: Ժամարարն էր շոգշ. Տ. Բարսեղ Արղ. Գալէմտէրեան:

— Մայր Տաճարին մէջ պաշտուած Ալլահերպութեան հանդիսաւոր նախատօնակին եւանոր յաջորդող Ս. Յակոբոս Տեառնեղոբր Գահակալութեան նուիրուած արարողութեան նախագահեց Ամեն. Ս. Պատարարը Հայրը: Ապա կատարուեցաւ Քահանայական կոչման արարողութիւն (Տե՛ս էջ 200):

— Իրիկնաղէմին, Մայր Տաճարին մէջ կատարուած եկեղեցէի եւ Լսկման կարգերուն նախագահեց Կարաբար Ս. Աթոռ դոնուոյ Արեմտեան Եւրոպայի Կաթող. Պատարարի Գերշ. Տ. Սերոփէ Արքեպիսկոպոս: Մանուկեան:

● Կիր. 6 Օգոս. — ՎԱՊՎԱՎԱՌ (Տօն Ալլահերպութեան Տեառն): Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց, 3 սարկաւազներու քահանայական ձեռնադրութիւնն ու օծումը կատարեց եւ օրուան տօնին ու նորընծաներուն առջեւ բացուած ձառայութեան առաջաբեղին կարեւորութեան ու նուիրականութեան շուրջ հոգեշունչ քարոզ մը խօսեցաւ Գերշ. Տ. Սերոփէ Արքեպիսկոպոս: Մանուկեան: Ս. Պատարագէն ետք, Գերշ. Սրբազանը կատարեց վեղարի տըւնութիւնը նորընծաներուն:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած Վնդատանին նախագահեց Գերշ. Տ. Նորայր Արքեպիսկոպոս: Պողարեան:

● Իշ. 7 Օգոս. — Յիւստակ մեղեց: Մայր Տաճարի Ս. Գլխադիր մատարան մէջ պատարագեց շոգշ. Տ. Ռուբէն Վրղ. Յովակիմեան: Ապա, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս նախագահութեամբ, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունք:

● Ուր. 11 Օգոստ. — Նախատունակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պօղոսեան:

● Շր. 12 Օգոստ. — Ս. Քաղեոսի առաքելոյն մեռոյ եւ Սանդիսոյ կուսից: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին կից Ս. Էջմիածին մատարան մէջ կատարուեցաւ Քահանայապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան կատարեց քահանայական ձեռնադրութիւնն ու օծումը Միհրան Սարգիսազին, զայն վերակոչելով իր անունովը՝ Տ. Հայրիկ (տե՛ս էջ 202): Ս. Պատարագէն ետք, Լուսարարապետ Սրբազանը նախագահեց Ժողովոյ օրհնելքի աւանդական արարողութեան:

● Կիր. 13 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արղ. Պալեան: Լուսարարապետ Սրբազանը նախագահեց Ժողովոյ օրհնելքի աւանդական արարողութեան:

— Կէսօրէ ետք, Ս. Էջմիածին մատարան մէջ կատարուեցաւ վերջարի տըլուութիւնը նորընծային:

● Բշ. 14 Օգոստ. — Այսօր սկսաւ Ս. Կոյսի վերափոխման տօնը կանխող ամէնօրեայ շանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը՝ Գեթնեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

● Շր. 19 Օգոստ. — Եվեանսի Ս. Փողովոյն (431): Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթնեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մաշտոց Վրղ. Բարխուսեան:

● Կիր. 20 Օգոստ. — Բարեկեցիկ Ս. Ասուածածնի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ նոյն վայրին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արղ. Պալեան:

● Ուր. 25 Օգոստ. — Նախատունակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարեկեան:

● Շր. 26 Օգոստ. — Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Էջմիածին մատարան մէջ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթնեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Արղ. Որդիքեան:

— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարեկեանի գլխաւորութեամբ, Միհրան Հայրեր ինքնաշարժեցով մեկնեցան Գեթնեմանի ձորը ու ժամը 4ին շարժափառաջով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու վերափոխման մեծանդան նախատունակը:

— Ժամը 7ին, նոյն Տաճարին մէջ վերսկսան արարողութիւնները, գլխաւորութեամբ Մար-

տիլիայէն հիւրարար Ս. Աթոռ ժամանած Ս. Ուխտիս Միհրան Հոգշ. Տ. Վաչէ Ծ. Վրղ. Իգնատիսեանի: Նախ պաշտուեցան Եկեղեցէի եւ Հսկման կարգեր, եւ ապա գիշերային ու առաւօտեան ժամերգութիւններ, որոնք աւարտեցան գիշերուան ժամը 1½ին: Յետոյ բոլորն ալ վերադարձան Մայրավանք:

● Կիր. 27 Օգոստ. — Վերափոխման Ս. Ա. ՏՈՒԱԾԱԾՆԻ: Առաւօտեան ժամը 6ին (Յունաց Ս. Կոյսի նշման տօնը Կիրակիի զուգարկուած ըլլալուն՝ այս տարի մեր արարողութիւնները կատարուեցան երկու ժամ կանուխ), զարձեալ գլխաւորութեամբ Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոսի, Միհրան Հայրեր ինքնաշարժեցով մեկնեցան Գեթնեմանի ձորը ու շարժափառաջով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց, ներշնչեալ քարոզ մը խօսեցաւ եւ Ս. Պատարագէն ետք կատարուած Անդաստանին նախագահեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած Անդաստանին եւ նախատունակին եւ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս:

● Բշ. 28 Օգոստ. — Յիւստակ մեկնոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Արղ. Որդիքեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, նախ Մայր Տաճարին մէջ եւ յետոյ գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Բ. Պատրիարք Հօր շիրմին ձուռ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարեկեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Դշ. 11 Ապրիլ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը եւ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. այցելեցին Թրքական Ընդհ. Հիւպատոսին:

● Բշ. 1 Մայիս. — Կէսօրին, Ս. Զատիկուան տօնին առթիւ Պատրիարքարան այցելեցին Կրօնից նախարարի ներկայացուցիչ Պր. Իսրայէլ Լիբրէլ եւ Ոստիկանապետ Պր. Քրասու:

● Դշ. 2 Մայիս. — Նոյն առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ բովանդակ Միհրանութեան, շնորհաւորական այցելութեան գնաց Յունաց Պատրիարքարան: Ապա, մեր Պատրիարքարան նոյն առթիւ շնորհաւորութեան եկան յաջորդաբար՝ Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքը, Յունաց Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Քօնսթանթին Եպս., Ֆրանչիսկեանց Գերշ. Կիւսթոտը, Ասորաց եւ Հապէշաց Եպիսկոպոսներ՝ բոլորն ալ իրենց Միհրանութեան անդամներով, Պապական Նուիրակը, Անկիլիան Արքեպիսկոպոսը, Հայ Կաթողիկոսը, Մարտիրոսներու եւ Ռումանական Եկեղեցւոյ հոգեւոր պետերը,

Հնւտերականներու և Արար Լուտերականներու երկնները և Ռուսաց վանքի Մեծաւորը: Կէօօրին՝ այցելութեան եկան նաև օտար տէրութեանց Հիւպատոսները:

— Իսկ Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս, քանի մը վարդապետներու ընկերակցութեամբ, այցելութիւն տուաւ Ասորաց և Հապէշաց Գերշ. Եպիսկոպոսներուն:

— Այսօր Լիոն, իր պաշտօնատեղին վերադարձաւ Գերշ. Տ. Դաւիթ Եպո. Սահական, որ Ֆրանսոսէջ ուխտաւորներու խումբով մը եկած էր Զատիկը մեր մէջ անցընելու:

● Եշ. 11 Մայիս. — Կէօրէ կտք, Բաղապետ Վսեմ. Թէտի Բօլէքի հրաւերին ընդառաջելով, Գիւանապետ Գերշ. Տ. Եանէ Արքեպիսկ. Աճէմեան, ընկերակցութեամբ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփայեանի և Տիար Գեօրգ Հինգիւանի, ներկայ գտնուեցաւ Դաւիթ բերդին մէջ, իտրայէլի Անկախութեան Յսամեակի առթիւ արքայաւոր ընդունելութեան:

● Գշ. 17 Մայիս. — Գիշերուան ժամը Տին, Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելից Ամերիկայի Միացեալ Նահանգաց եղբարարխտ Նախագահ ձօն Բէնէտի շայրին՝ Տիկին Փաղլին Օնասիս-Բէնէտի, որ հիւրաբար կը գտնուէր Իտրայէլ:

● Եր. 20 Մայիս. — Կէօրէ կտք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Ի գլուխ Միարանութեան, բարամբ կատարեց Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի Տարեկան Պաղարին:

● Բշ. 22 Մայիս. — Կէօրէ առաջ, Աւագ Թարգման Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփայեան և Հոգշ. Տ. Մանուէլ Արդ. Երկաթեան ներկայ գտնուեցան Ֆրանչիսկեաններու Մայր Տաճարին մէջ, վերջերս սպաննուած Իտալիոյ նախկին Վարչապետ Ալտօ Մորայի հոգւոյն համար մատուցուած Ս. Պատրարգին և հանգստեան պաշտամունքին:

— Նոյն օրը, Հոգշ. Տ. Հայկազուն Վրդ. Մեղզոնեան մեկնեցաւ Միացեալ Նահանգներ, իր նոր պաշտօնատեղին:

● Բշ. 23 Մայիս. — Երեկոյեան ժամը Յին, Իտրայէլի Խորհրդարանին (Բէնէտի) մէջ, Պետութեան նորընտիր Նախագահ Տիար Իյնաք Նափօնի երգման արարողութեան ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Եանէ Արքեպիսկոպոս:

● Եշ. 1 Յունիս. — Վաղուան Իտալիոյ աղգային տօնին առթիւ, Երեկոյեան, Իտալիական Ընդհնջիւղպատասին կողմէ, Հիւպատոսարանի տան մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպո. Գարիկեան և Տիար Գեօրգ Հինգիւան:

● Եր. 3 Յունիս. — Երեկոյեան, Անգլիոյ Ն. Վ. Էլիզապէթ Բ. Թագուհոյ ծննդեան 52րդ տարեդարձի առթիւ, Բրիտանական Ընդհնջիւղպատասին կողմէ, Հիւպատոսարանի տան մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերշ. Տ. Եանէ Արքեպո. և Հոգշ. Տ. Վահան Վրդ.:

● Բշ. 5 Յունիս. — Ֆրանսական նոր Հիւպատոս Տիար Պէրնար Լօփիւս իր առաջին այցելութիւնը տուաւ Ս. Պատրիարք Հօր:

● Բշ. 19 Յունիս. — Երեկոյեան, Հոգեպալտեան տօնին առթիւ, Ռուսաց Միարանութեան Մեծաւորի հրաւերին ընդառաջելով, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպո. Ասլանեան, ընկերակցութեամբ առժժ. Թարգման Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեանի և Տիար Կարպիս Հինգիւանի, ներկայ եղաւ Russian Compound ի մէջ տրուած ընդունելութեան:

● Եշ. 22 Յունիս. — Ս. Ուխտիս Միարան Հոգշ. Տ. Գեօրգ Վրդ. Եազարեան, որ երկու օրեր առաջ Մաքսաէա Հիւանդանոց փոխադրուած էր, ուղեկի զժուար բայց յաջող գործուցութեան մը ենթարկուեցաւ:

● Եր. 25 Յունիս. — Երեկոյեան, Եւրօպացոց Ս. Յովն. Մկրտչի ծննդեան տօնին առթիւ, Սէյք ձօղ Անտարուժարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպո. և Հոգշ. Տ. Սեան Վրդ.:

● Եշ. 26 Յունիս. — Կէօրէ առաջ, Լուտիւսաց Պատրիարք Մօնս. Տ. Պէլիթրիթի կողմէ, Ֆրանչիսկեաններու Մայր Տաճարին մէջ կատարուած Սարեկաներու ձեռնադրութեան ներկայ գտնուեցաւ Հոգշ. Տ. Ասպետ Արեղայ:

● Ուր. 30 Յունիս. — Երեկոյեան, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպո., Հոգշ. Տ. Սեան Վրդ. և Տիար Վ. Հինգիւան ներկայ գտնուեցան Պաղպական Նախարակի պարանքին մէջ, Ն. Ս. Պօղոս Զ. Պապի գահակալութեան 15րդ տարեդարձի առթիւ տրուած ընդունելութեան:

● Գշ. 4 Յունիս. — Երեկոյեան, Ամերիկայի Միացեալ Նահանգաց անկախութեան 202րդ տարեդարձին առթիւ, Ամերիկեան Ընդհնջիւղպատասին կողմէ, Հիւպատոսարանի տան մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպո. Ասլանեան, Հոգշ. Տ. Հայկապետ Վրդ. Պայրամեան, Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան և Քարտուղար Տիար Կարպիս Հինգիւան:

● Ուր. 14 Յունիս. — Երեկոյեան, Ֆրանսական Յեղափոխութեան 180րդ տարեդարձին առթիւ, Ֆրանսական Ընդհնջիւղպատասին կողմէ, Հիւպատոսարանի պարեկին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպո., Հոգշ. Տ. Սեան Վրդ. և Տիար Կարպիս Հինգիւան:

● Գշ. 26 Յունիս. — Ս. Աթոռ ժամանեց Մ. Տ. Կիլիկիոյ Միարան Թէհրանի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Արտակ Արքեպո. Մանուկեան և վերադարձաւ արաթ մը կտք:

● Ուր. 4 Օգոստ. — Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր մեկնեցաւ Եգիպտոս, ուր պիտի մնայ ատեն մը իբրև օգնական Եգիպտոսոյց Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Եպո. Զինչինեանի: